ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«11» «հունիսի» 2026 թվական № 180-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶՎԱՐԹՆՈՑ»
ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի №363-Լ հրամանով հաստատված «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8-րդ գլխի 84-րդ կետի 5-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի գործարար ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Հ. ՄԱՐԵՎՈՍՅԱՆ

6/11/2026

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱՐԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
«11» հունիսի 2026 թվականի N180-Լ հրամանի

«ԶՎԱՐԹՆՈՑ» ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. 1961 թվականից գործող «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոնը 1995 թվականին վերակազմավորվեց որպես հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերություն:
2. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մայիսի 29-ի N153 որոշման՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը դարձել է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում (այսուհետ՝ ԻԿԱՕ) Հայաստանի Հանրապետության լիազոր օդերևութաբանական մարմին, իսկ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2007 թվականի հունիսի 4-ի N142-Ա հրամանով «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նշանակվել է Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» միջազգային օդանավակայաններում օդերևութաբանական ապահովման մարմին և Հայաստանի Հանրապետության տարածքում օդային երթևեկության սպասարկման օդերևութաբանական հսկում իրականացնող մարմին: Ընկերությանը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից (այսուհետ՝ տեխնիկական կարգավորման լիազորված մարմին) 2014 թվականի հունիսի 16-ին տրվել է աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովում իրականացնելու թույլտվություն (սերտիֆիկատ):
3. Ընկերությունը 100% պետական բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերություն է, որի բաժնետոմսերի կառավարման լիազորությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N466-Ա որոշմամբ վերապահվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը:
4. Ընկերությունն իր գործառույթներն իրականացնում է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա), Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ), Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական ապահովման կանոնակարգը հաստատելու մասին» N 383-Ն որոշմամբ, Օդային երթևեկության

կառավարման, աերոնավիգացիոն ծառայությունների և օդային երթևեկության կառավարման այլ ցանցային գործառույթների մատակարարների և դրանց վերահսկողության համար ընդհանուր պահանջները սահմանելու մասին, ինչպես նաև ԵՀ 482/2008 կանոնակարգի, ԵՄ 1034/2011, ԵՄ 1035/2011 և ԵՄ 2016/1377 կանոնակարգերի ուժը կորցնելու մասին և (ԵՄ) թիվ 677/2011 կանոնակարգի փոփոխությունների վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի 2017 թվականի մարտի 1-ի 2017/373 կանոնակարգի պահանջների, շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի N 363-Լ հրամանով հաստատված Ընկերության կանոնադրությամբ, Եվրոկոնտրոլի 2013 թվականի նոյեմբերի թիվ 13.60.01 փաստաթղթի «Մայրուղային գանձումների ծախսահիմքի սահմանման և միավորի դրույքաչափերի հաշվարկի սկզբունքներ»-ի և այլ իրավական ակտերի հիման վրա:

5. Ընկերության կառուցվածքը գծապատկերով.



ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

6. Ընկերության զարգացման հիմնական գործընթացները ձևավորվել են 2021-2025թթ. հնգամյա զարգացման գործարար ծրագրի հիմքով: Սույն գործարար ծրագրի (այսուհետ՝ Գործարար ծրագիր) նպատակն է՝ սահմանել 2026 թվականի ընթացքում իրականացվելիք միջոցառումների ծրագիրը և կատարելագործել Հայաստանի Հանրապետության օդային տարածքում և միջազգային օդանավակայաններում իրականացվող թռիչքների օդերևութաբանական սպասարկումը: Սույն միջոցառումները նպատակաուղղված են Ընկերության ընթացիկ գործունեության ապահովմանը, կիրառվող գործառույթների կանոնակարգմանը, միջազգային կազմակերպությունների ընդունած մոտեցումների, ստանդարտների ու գործառույթների կիրառմանը, անհրաժեշտ միջազգային համագործակցության ապահովմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օդային տարածքում քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկմանն անհրաժեշտ իրազեկ ու գործունյա անձնակազմի ձևավորմանը:
7. 2026 թվականին նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք հանդիսանում են 2020-2025թթ. իրականացված կամ ընթացք ստացած գործընթացների տրամաբանական շարունակությունը, առկա և ակնկալվող արտադրատնտեսական ակտիվների հնարավորությունների շրջանակներում՝ կարևորելով Ընկերության ստորաբաժանումների գործունեության օպտիմալացումն ու առավել կանոնակարգված տեսլականը:
8. Գործարար ծրագրում ընդգրկված բոլոր միջոցառումների նախագծերն անցել են մի շարք քննարկումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաստատման փուլերը: Դրանց իրականացման ընթացքում, ըստ ընդունված կարգի, պահպանվելու են Ընկերության հիմնադրի կամ նրա ներկայացուցչի նախնական տեղեկացման և համաձայնեցման գործընթացները:
9. Գործարար ծրագիրը նախատեսում է.
   1) 2026 թվականի թռիչք-վայրէջքի ծավալի և պահանջարկի կանխատեսումը,
   2) 2026 թվականի ֆինանսական արդյունքների կանխատեսումը,
   3) 2026 թվականի զարգացման միջոցառումները՝ ըստ գործունեության հիմնական բնագավառների, այդ թվում.
      ա. աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովում,
      բ. տեխնիկական ապահովում,
      գ. մարդկային ռեսուրսների կառավարում,
      դ. ֆինանսատնտեսական գործունեություն,
      ե. միջազգային համագործակցություն և այլն:
10. Գործարար ծրագիրը մշակվել է Ընկերության թռիչքների անվտանգության և որակի կառավարման բաժնի կողմից:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

11. Ընկերության առաքելությունը Հայաստանի Հանրապետության օդային տարածքում և միջազգային օդանավակայաններում թռիչքային առումով անվտանգ և ծախսային առումով արդյունավետ քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկումն է: Այդ նպատակներին հասնելու համար պետք է շարունակաբար զարգացնել և բարելավել բնագավառի կառավարման մեթոդները, մարդկային ռեսուրսները, կիրառվող աշխատանքային ընթացակարգերը և ենթակառույցները՝ համագործակցելով ԻԿԱՕ-ի, Եվրոկոնտրոլի, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության, շրջակա միջավայրի նախարարության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի, այդ թվում օդային տարածքից օգտվողների և բնագավառը ներկայացնող այլ ընկերությունների հետ:
12. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.
    1) ինքնաթիռների թռիչքների օդերևութաբանական սպասարկման իրականացում,
    2) աերոսինոպտիկական նյութերի մշակում և վերլուծում,
    3) ամրակցված տարածքի եղանակի կանխատեսում,
    4) ավիացիայի համար եղանակային վտանգավոր երևույթների առաջացման վերաբերյալ շտորմային նախազգուշացումների կազմում և դրանց ճշգրտումներ,
    5) թռչող անձնակազմերին օդերևութաբանական համապատասխան փաստաթղթերով ապահովում,
    6) օդանավակայանում փաստացի եղանակի դիտարկումների կատարում,
    7) ավիացիոն օդերևութաբանական հետազոտությունների իրականացում և եղանակի կանխատեսման նոր մեթոդների կիրառում:

ԳԼՈՒԽ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանն անդամակցող երկիր, պարտավորություն է ստանձնել քաղաքացիական ավիացիայի թռիչքներն անվտանգ դարձնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բոլոր միջազգային օդանավակայաններն ապահովել համապատասխան օդերևութաբանական մարմիններով: Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում միակ մասնագիտացված և սերտիֆիկացված կազմակերպությունն է, որն իրականացնում է քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկում Հայաստանի Հանրապետության օդային տարածքում և միջազգային օդանավակայաններում:
14. Ընկերության գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության օդային տարածքում, ինչպես նաև տեղական և միջազգային օդանավակայաններում աերոնավիգացիայի օդերևութաբանական սպասարկման ապահովումն է:
15. Ընկերության խնդիրներն են քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկման բնագավառում կիրառվող ընթացակարգերի կատարելագործումը, նոր ընթացակարգերի մշակումը, աերոնավիգացիայի օդերևութաբանական սպասարկմանն անհրաժեշտ մարդկային ռեսուրսների զարգացումը, տեխնիկական սարքավորումների հետագա արդիականացման ապահովումը համաձայն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների և Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պահանջների:

16. Ընկերության գործունեության ընդլայնումը հնարավորություն կտա ստեղծել ռադիոլոկացիոն ցանց, ինչը թույլ կտա Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում իրականացնել եղանակային պայմանների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության փոխանակում, ինչի արդյունքում էականորեն կբարելավի փոքր ավիացիային մատուցվող օդերևութաբանական ծառայությունների որակը:
17. Ընկերության զարգացման հեռանկարային հիմնական ուղղությունները նախանշելու, մատուցվող օդերևութաբանական ծառայությունների որակի շարունակական զարգացումն ապահովելու նպատակով սահմանվել են ռազմավարական հետևյալ նպատակները.
    1) կատարելագործել թռիչքների անվտանգության և որակի կառավարման համակարգերը և ձգտել ավելի բարձր մակարդակի,
    2) համապատասխանել միջազգային քաղաքացիական ավիացիայի ոլորտի օրենսդրության պահանջներին,
    3) կատարելագործել Ընկերության ֆինանսական կառավարումը,
    4) արդիականացնել տեխնիկական և տեղեկատվական միջոցները, ներդնել ժամանակակից համակարգեր աերոնավիգացիայի օդերևութաբանական սպասարկման ոլորտում,
    5) լիարժեք կառավարել և վերապատրաստել մարդկային ռեսուրսները:

ԳԼՈՒԽ 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են՝
    1) Հայաստանի Հանրապետության տարածքում օդանավ շահագործող կազմակերպություններին և օդային երթևեկության կազմակերպման մարմիններին ավիաօդերևութաբանական տեղեկատվության տրամադրում,
    2) Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններից իրականացվող չվերթների ավիաօդերևութաբանական տեղեկատվության տրամադրում (փաստացի և կանխատեսվող),
    3) Հայաստանի Հանրապետության օդային տարածքում վտանգավոր երևույթների վերաբերյալ (SIGMET և AIRMET) տեղեկատվության տրամադրման ապահովում,
    4) Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններում վտանգավոր եղանակային երևույթների վերաբերյալ նախազգուշացումների ապահովում,
    5) աերոսինոպտիկական նյութերի մշակում և վերլուծում, ինչպես նաև պահպանում և արխիվացում:
19. Ընկերությունը շուրջօրյա ռեժիմով իրականացնում է.
    1) օդանավակայանի փաստացի և Երևանի թռիչքատեղեկատվական շրջանում կանխատեսվող եղանակի մասին հաղորդագրություն (ամեն կես ժամը մեկ),
    2) Երևանի թռիչքատեղեկատվական շրջանում կանխատեսվող եղանակի մասին հաղորդագրություն TAF ֆորմատով (յուրաքանչյուր վեց ժամը մեկ),
    3) ավիացիայի համար վտանգավոր երևույթների վերաբերյալ SIGMET ձևաչափով հաղորդագրությունների տրամադրում սպասարկվող տարածաշրջանի համար,
    4) ցածր բարձրություններում իրականացվող թռիչքների համար GAMET գոտիական կանխատեսումներ և AIRMET տեղեկատվության տրամադրում:

ԳԼՈՒԽ 6. 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

20. 2025 թվականին նախատեսված է եղել իրականացնել տեխնիկական ապահովման հետևյալ հիմնական աշխատանքները.
    1) «Զվարթնոց» օդանավակայանի վազքուղու 08 շեմում նոր օդերևութաբանական կայանի տեղադրում և ինտեգրում ԱՄԻՍ-ՌՖ ծրագրային ապահովման միջոցին,
    2) «Զվարթնոց» օդանավակայանի համար կազմվող օդերևութաբանական ամփոփագրերի IWXXM ֆորմատով կոդավորում իրականացնելու նպատակով նոր ծրագրային ապահովման միջոցի ձեռքբերում,
    3) «Զվարթնոց» օդանավակայանի փաստացի և կանխատեսվող եղանակը օդերևութաբանական միջազգային բանկերին տրամադրելու նպատակով գործող AFTN համակարգից AMHS համակարգին անցում կատարելու համար ծրագրային ապահովման միջոցի ձեռքբերում,
    4) «Զվարթնոց» օդանավակայանի դիտարկումների շենքում օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում,
    5) «Շիրակ» օդանավակայանի նոր դիտարկումների շենքի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում:
    6) «Զվարթնոց» և «Շիրակ» միջազգային օդանավակայանների և հարակից շրջանների 2020-2024թթ. կլիմայական բնութագրի կազմում:
21. Գործարար ծրագրի 20-րդ կետով սահմանված տեխնիկական ապահովման ուղղություններն ամբողջությամբ իրականացվել են, բացառությամբ 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի: 4-րդ ենթակետով նախատեսված օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծումը հնարավոր չի եղել ավարտել, քանի որ կենտրոնի ստեղծման համար նախատեսված աշխատասենյակի վերանորոգումը կապալառու ընկերության կողմից չի իրականացվել պատշաճ որակով, ինչի պատճառով պայմանագիրը միակողմանի լուծվել է: 5-րդ ենթակետով նախատեսված «Շիրակ» օդանավակայանի նոր դիտարկումների շենքի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ծախսերի գնահատման մրցույթի անցկացումը չի իրականացվել, քանի որ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ հողատարածքի տրամադրման բանակցություններն արդյունք չեն տվել: 6-րդ ենթակետով նախատեսված կլիմայական բնութագրի կազմումը չի իրականացվել աշխատանքային ծանրաբեռնվածության և ռեսուրսների անբավարարության պատճառով:
22. Ընկերությունը 2026 թվականին նախատեսում է իրականացնել.
    1) «Զվարթնոց» օդանավակայանի դիտարկումների շենքում օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում, մոնիթորինգի ծրագրի ներդնում և լոկալ ցանցի վերակառուցում՝ օգտագործելով ծրագրավորվող ցանցային բաժանարարներ,
    2) «Շիրակ» օդանավակայանի համար տեղումնաչափի ձեռքբերում,

3) Կապան խոշորացված համայնքի Սևաքար բնակավայրում ամպերի ստորին սահմանի բարձրության տվիչի փոխարինում,
4) «Զվարթնոց» և «Շիրակ» միջազգային օդանավակայանների և հարակից շրջանների 2020-2024թթ. և 2021-2025թթ. ժամանակաշրջանների կլիմայական բնութագրերի կազմում,
5) «Զվարթնոց» օդանավակայանի եղանակային դիտարկումների ավտոմատացված համակարգի (AWOS) փոխարինում:

ԳԼՈՒԽ 7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

23. Գործարար ծրագրի շրջանակներում Ընկերության ուժեղ և թույլ կողմերի, վտանգների և հնարավորությունների գնահատման արդյունքում առաջիկա տարում կանխատեսվում են հետևյալ հնարավոր ռիսկերը.
    1) նոր համակարգերի ներդրման ձգձման կամ հետաձգման, ինչպես նաև զարգացման ծրագրերի տապալում,
    2) տնտեսական /ֆինանսական/ անկայունություններ՝ պայմանավորված մի շարք հնարավոր պատճառներով՝ ծրագրվող թռիչքների քանակի փոփոխություններ, մատուցվող ծառայությունների գնագոյացման փոփոխություններ /էժանացում/ և այլն,
    3) մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրերի տապալում,
    4) նոր միջազգային պահանջները և դրանք բարելավելու նպատակով օդերևութաբանների և տեխնիկական անձնակազմերի կատարելագործման փորձառության բարձրացման կազմակերպչական և ֆինանսական դժվարություններ,
    5) տեխնիկական համակարգերի արդիականացման և օպտիմալ մոտեցման դժվարություններ:
24. Ընկերության կողմից ռիսկերի և վտանգների ազդեցության մեղմացման և տեսլականին հասնելու համար մշակվել են հետևյալ ռազմավարական խնդիրները.
    1) կատարելագործել որակի և անվտանգության կառավարման համակարգը և ձգտել եվրոպական մակարդակի,
    2) համապատասխանել միջազգային քաղաքացիական ավիացիայի ոլորտի օրենսդրության պահանջներին,
    3) կատարելագործել Ընկերության ֆինանսական կառավարումը՝ ներառելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման միջոցները,
    4) արդիականացնել տեխնիկական և տեղեկատվական միջոցները՝ ներդնել ժամանակակից համակարգեր աերոնավիգացիայի օդերևութաբանական սպասարկման ոլորտում,
    5) մարդկային ռեսուրսների լիարժեք կառավարում և վերապատրաստում:
25. Ազգային յուրահատուկ պահանջները հաշվի առնելու հետ մեկտեղ այս ռազմավարական խնդիրները համապատասխանում են ԻԿԱՕ-ի և Եվրոկոնտրոլի պահանջներին:

ԳԼՈՒԽ 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Ընկերությունը ծրագրում է շարունակել իր գործունեության համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, ԻԿԱՕ-ի, Եվրոկոնտրոլի և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության պահանջներին, գործող և նոր ընդունվող կանոնակարգերին ու հրահանգներին, ապահովել նշված ծրագրերով և կանոնակարգերով նախատեսվող գործունեության և որակի արդյունավետության բարձր մակարդակը:
27. Հայաստանի Հանրապետության օդային տարածքի սահմանափակ չափերի, ինչպես նաև միջազգային օդանավակայանների սակավ քանակի պայմաններում Ընկերության ապագա զարգացումը կարող է երաշխավորված լինել, եթե օգտագործվեն նրա ներքին ռեսուրսները՝ առավելագույնս հենվելով Ընկերության մարդկային-մասնագիտական ներուժի վրա:
28. Ընկերությունը կշարունակի համագործակցել Եվրոկոնտրոլ միջազգային կազմակերպության հետ Հայաստանի Հանրապետության տարածքով մայրուղային թռիչքների օդերևութաբանական սպասարկման դիմաց գանձումներ իրականացնելու համար:
29. Ընկերությունը, որպես ազգային աերոնավիգացիայի օդերևութաբանական ծառայություն ապահովող մարմին, իր լիազորությունների շրջանակներում կօժանդակի ազգային տնտեսության աճին:
30. Նախատեսվում է կատարելագործել ներդրված որակի կառավարման համակարգի գործունեությունը, ինչի արդյունքում Ընկերությունում կլավարկվեն փաստաթղթերի, փոփոխությունների կառավարման և Ընկերությունում անվտանգության գնահատման կենսագործունեությանն առնչվող ընթացակարգերը:
31. Հաշվի առնելով քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից 2024 թվականին իրականացված համապատասխանության ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերությունները՝ Ընկերության ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնական հրահանգներն ամբողջությամբ վերանայվել են, իսկ Ընկերությունում գործող բոլոր ընթացակարգերը նախատեսվում է վերանայել 2026 թվականի ընթացքում:
32. Մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը նախատեսվում է մինչև 4 մասնագետ-կանխատեսողի, 3 մասնագետ-դիտորդի և թռիչքների անվտանգության և որակի կառավարման մասնագետի համար կազմակերպել որակավորման բարձրացման դասընթացներ:
33. Մինչև սույն թվականի հուլիսի 1-ը նախատեսվում է իրականացնել օդերևութաբանական սպասարկման և տեխնիկական սպասարկման անձնակազմերի մասնագիտական պատրաստվածության (կոմպետենտ) համապատասխանության վերաբերյալ ստուգումների անցկացում:
34. Օդերևութաբանական սպասարկում իրականացնող անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործումն իրականացվում է համապատասխան վերապատրաստման դասընթացներին պարտադիր մասնակցության միջոցով հինգ տարին մեկ անգամ, ինչը բխում է ԻԿԱՕ-ի և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության պահանջներից:
35. Նոր տեխնիկական միջոցների ներդրմամբ պայմանավորված իրականացվում են սպասարկող անձնակազմի տեխնիկական ուսուցումներ աշխատանքային

տեղերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև արտադրողի կողմից կազմակերպված վայրում:

36. Ընկերությունը օդերևութաբանական սպասարկման անձնակազմի համալրման համար վարում է բարձր մակարդակի մասնագետների ընտրության քաղաքականություն:
37. Ընկերությունը պլանավորում է մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը օդերևութաբանական սպասարկման անձնակազմի առնվազն տասը աշխատակիցների համար կազմակերպել հինգերորդ մակարդակի ավիացիոն անգլերենի մասնագիտական վերապատրաստում:
38. Ընկերությունում իրականացված տեխնիկական վերազինման և ծրագրային ապահովումների հետ կապված բոլոր փոփոխությունները գնահատվելու են համաձայն գործող ընթացակարգերի:
39. Օդերևութաբանական ծառայությունների մատուցմանն առնչվող բոլոր ընթացակարգերն անմիջականորեն գտնվում են թռիչքների անվտանգության և որակի կառավարման բաժնի հսկողության ներքո:

ԳԼՈՒԽ 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

40. Ընկերությունն իրականացնում է ծախսերի արդյունավետության բարձրացման, օպտիմալացման քաղաքականություն և ծրագրում է հնարավորինս կրճատել դրանք. մասնավորապես՝ վերջին հինգ տարիների հիմնավորված և նպատակային կապիտալ ներդրումներին ուղղված ծախսերը հնարավորություն են տվել հնարավորինս կրճատել շենք-շինությունների, օդերևութաբանական համակարգերի և տրանսպորտային միջոցների ընթացիկ շահագործման և սպասարկման ծախսերը:
41. Նախատեսվում է քննարկել նաև մատուցվող ծառայությունների գնագոյացման համակարգին ու ծառայությունների հնարավոր նոր գնորդների հետ աշխատելու ներուժին առնչվող հարցերը:

Ընկերության անվանումը «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ

Եկամուտների և ծախսերի հաշվետվություն
Չափման միավորը՝ (հազար դրամ)

Հոդվածի անվանումը	2026թ. 3 ամիս պլան	2026թ. 6 ամիս պլան	2026թ. 9 ամիս պլան	2026թ. Նախահաշիվ	2025թ. 12 ամիս փաստացի	Դինամիկա	%	2024թ. 12 ամիս փաստացի
Եկամուտներ ընդամենը	160,891	321,782	482,672	643,563	606,143	49,318	8	555,454
Վճարովի ծառայություններ, որից	160,891	321,782	482,672	643,563	594,245	49,318	8.30	538,550
Ավիաօդերևութաբանական ծառայություններ	160,891	321,782	482,672	643,563	594,245	49,318	8.30	538,550
Այլ եկամուտներ, որից					5,014	- 5,014	- 100	5,139
Արտարժույթի տարբերությունից եկամուտներ					6,884	- 6,884	- 100	11,765
Ժամկետանց կրեդիտորական պարտքերի դուրս գրում								
Ծախսեր ընդամենը	64,000	128,000	192,000	256,000	238,690	17,310	7	238,821
Աշխատավարձ, որից	64,000	128,000	192,000	256,000	238,690	17,310	7.25	238,821
Վարչական և գրասենյակային աշխատողներ	9,600	19,200	28,800	61,440	35,804	25,636	72	35,823
Օդերևութաբանական սպասարկման աշխատողներ	41,600	83,200	124,800	143,360	155,149	- 11,789	- 8	155,234
Թռիչքների անվտանգ, և տեխ. սպասարկման աշխատողներ	12,800	25,600	38,400	51,200	47,738	3,462	7	47,764
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	2,250	4,500	6,750	9,000	9,553	- 553	- 6	9,781
Կադրերի վերապատրաստում	625	1,250	1,875	2,500	1,612	888	55	743
Գույք սարքավորումներ և վերանորոգում, որից	600	1,200	1,800	4,458	3,770	- 1,370	- 36	3,770
Փափուկ կահույք	-	-	-	-	-	-		-
Սարքավորումներ և տնտեսական գույք	600	1,200	1,800	2,400	3,770	- 1,370	- 36	3,770
Շենք շինությունների ընթացիկ և նորոգում (ոչ կապիտալացվող)								
Կոմունալ վճարներ	1,647	3,294	4,941	6,588	5,308	1,280	51	5,797
Էլեկտրաէներգիա, ջեռուցում	1,125	2,250	3,375	4,500	3,517	983	28	3,543
Գազի ծախսեր								
Ջրմուղ-կոյուղու ծախսեր	150	300	450	600	649	- 49	- 7	1,116
Կապի և հեռահաղորդակցության ծախսեր	372	744	1,116	1,488	1,142	346	30	1,138
Տրանսպորտային միջոցների գծով ծախսեր	918	1,836	2,754	3,673	3,436	237	47	3,466
Բենզին	593	1,185	1,778	2,370	2,599	- 229	- 9	2,599
Տրանսպորտային միջոցների սպասարկման ծախսեր	326	651	977	1,303	837	466	56	867
Ամորտիզացիա	16,750	33,500	50,250	67,000	67,169	- 169	- 0.25	62,117
Այլ ծախսեր	75	150	225	300	3,630	- 3,330	- 92	3,630
Տարածքի, գույքի և սարքավորումների վարձակալություն	7,042	14,084	21,126	28,168	18,412	9,756	53	22,800
Թույլտվություններ	300	600	900	1,200	742	458	62	500
Տեղեկատվության ստացման ծախսեր	1,150	2,300	3,450	4,600	3,673	927	25.22	3,628
Նյութեր, ապրանքներ	2,304	4,607	6,911	9,215	2,790	6,425	230	2,917
Այլ պայմանագրային ծառայություններ	4,316	8,631	12,947	17,262	14,305	2,957	21	4,889
Օդերևութաբանական գործիքների ստուգաչափման և ստանդարտացման ծախսեր	88	175	263	350	266	84	32	273
Որակի կառավարման համակարգի և տնտեսական գործունեության տարեկան աուդիտ	135	270	405	540	750	- 210	- 28	540
Մասհանում հատուկ նշանակության հիմնադրամին	-	-	-		12,989	- 12,989	- 100	14,087
Արտարժույթի տարբերությունից ծախսեր	1,750	3,500	5,250	7,000	3,625	3,375	93	7,603
Շահույթ մինչև հարկումը	58,692	117,384	176,076	225,710	215,424	5,015	2	170,094
Շահութահարկ	10,565	21,129	31,694	40,628	39,607			35,362
Զուտ շահույթ	48,128	96,255	144,383	185,082	175,816	5,015	2	134,732
Այլ տվյալներ								
Աշխատակիցների քանակ-հոգի, այդ թվում	53	53	53	53	52	1	2	52
Վարչական և գրասենյակային աշխատողներ	6	6	6	6	6	-	-	6
Օդերևութաբանական սպասարկման աշխատողներ	38	38	38	38	37	1	2.70	37
Թռիչքների անվտանգ, և տեխ. սպասարկման աշխատողներ	9	9	9	9	9	-	-	9
Մահճակալների քանակ-հատ								
Միջին մահճակալ/օր ցուցանիշ								

Արդյունավետության ցուցանիշներ ընդամենը
եկամտի նկատմամբ
Չափման միավորը (դրամ)

Վճարովի ծառայությունների մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում	100	100	100	100	100	-	-	100
Այլ եկամուտների մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում	-	-	-	-	-	-	-	-
Միջին աշխատավարձ ընդհանուր ՀՀ դրամ	348,043	348,043	348,043	348,043	348,043	-	-	336,293
Վարչական և գրասենյակային աշխատողների միջին աշխատավարձ ՀՀ դրամ	449,159	449,159	449,159	449,159	449,159	-	-	433,390
Օդերևութաբանական սպասարկման անձնակազմի միջին աշխատավարձ ՀՀ դրամ	279,342	279,342	279,342	279,342	279,342	-	-	278,010
Թռիչքների անվտանգ, և տեխ. սպասարկման աշխատողներ միջին աշխատավարձ ՀՀ դրամ	315,627	315,627	315,627	315,627	315,627	-	-	297,480
Աշխատավարձի գործակից %	73.68	73.68	73.68	73.24	71.64	121.11	28.15	72.78
Սարքավորումների և նորոգման գործակից %	0.70	0.70	0.70	0.70	1.15	- 10.53	145.40	1.17
Կոմունալ ծախսերի գործակից %	1.90	1.90	1.90	1.88	1.59	8.96	197.02	1.77
Տրանսպորտային միջոցների գործակից %	1.06	1.06	1.06	1.05	1.03	1.65	181.69	1.06
Պահպանման այլ ծախսերի գործակից %	0.09	0.09	0.09	0.09	1.10	- 18.90	- 78.08	1.12
Շահութաբերություն մինչև հարկեր %	36.48	36.48	36.48	35.07	35.54	10.17	- 113.66	30.62
Զուտ շահութաբերություն %	29.91	29.91	29.91	28.76	29.01	10.17	57.47	24.26

Արդյունավետության ցուցանիշներ 1 մահճակալի գծով

Աշխատավարձի գործակից								
Կոմունալ ծախսերի գործակից								

*** Հիմնական միջոցների արժեքը 46763 հզ. Դրամ,սակայն վերցվել է 67000.0 հզ. դրամ ծախս համարվող մասը**